

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարկիսի վեցամս'այ	7 "
Արսասահմանի համար սարկիսի	15 ֆր.
վեցամսայ	8 "
Անկերիկայի համար սարկիսի	3 ռ.
վեցամսայ	1.50 "

Եւանջիլիսի տղր սուրբի երեսիս համար 40 սանթիմ իսկ վերջիս երեսիս համար 20 սանթիմ է: Իրեփիս սէլի սանթիմերու համար 20 0/0 զեղը կը լայ:

Վանկայի համար ձեռք 40 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ՔԱՂՄՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղիկի խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չնկարներ

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻՒԹԻ ՎՃԱՐԷ

## Ա Յ Ա Բ Ա Ղ Դ Ը

Կը ծանուցանեմ յարգոյ հասարակութեան թէ՛ Սօֆիոյ քաղաքի 11. վիճակահանութեան, Բ. կարգի ամենամեծ շահետար ֆր. 20 000 ոսկի շահած է թիւ 32661 սոմսայը, ծախուած գլխաւոր զործակալութեան սանթիմով, քաղաքիս մէջ. Այդ բաղդը վայելցնէ հայ օրիորդ մը:

Իսկապէս կայր է չգիտցուիր թէ երբ կը ժպտի. ամէն պարագայի մէջ խելացիութիւն է բաղդը փորձել՝ այն ալ գլխաւոր գործակալութեան հայթայթած տոմսերով, թէ ո՛վ չունի, լաւ է որ ձեռք տայ բաղդին:

### ՍՍՐԳԻՍ ԳՍԱՐԻԷԼԻԱՆ

Գլխաւոր գործակալ Սօֆիոյ քաղաքի վիճակահանութեան, երաշխաւորեալ Ինքնակազմ կոոպուցութեան է

## Հ Ա Յ

### ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Հայերը, ինչպէս նաեւ բոլոր միւս ազգութիւնները, որ սուրբութեան Ապտիւլ Համիտի գերիշխանութեան տակ կը գտնուին, իրենց ազատութիւնն ու քաղաքական անկախութիւնը ձեռք ձգելու համար կարելի կը մղեն:

Հայաստանի, ինչպէս նաեւ Մակեդոնիոյ մէջ, անձնազոհ մարտիկներ ու անկեղծ հայրենասէրներ կը գտնուին, որոնց անունը հայկական պատմութեան մէջ ոսկի տառերով քանդակուած պիտի մնայ: Եւ սակայն բռնապետական ճնշող լուծէն ազատելու համար եղած բոլոր փորձերը շատ ու շատ սուղի նստած են Հայաստանի:

Ով որ լսած է կամ կարդացած, թէ ինչպէս Փաքր Ասիոյ արիւն կզակ քիւրտերը խեղճած են հայկական ապստամբական շարժումները, նա միայն կրնայ բեւեակայել այն գոփոխային շարժարանքը որուն հայերը ենթարկուած են:

Հայ յեղափոխականները անձրագիր և անորոշ յատակազրծով մը կը գործեն: Ասի անոնց ամենամեծ պակասութիւնն է. Հայաստանի մէջ յեղափոխական կազմակերպութիւն գոյութիւն չունի, եթէ գոյութիւն իսկ ունենայ միաձոյլ և իրարու հետ

հաշտ չեն, ամէն կոմիտէ կը գործէ անշատ. պէտք եղած միութիւնը կը պակսուի:

Ինչպէս ամէն տեղ առ հասարակ, Հայաստանի մէջ ալ առաջնութիւն վաստակելու համար եղած ձգտումները յեղափոխական մարտումի հիմքերը կը քանդեն:

Հայերը, իրենց թափած գերմարդկային ճիգերու անպտուղ մնալը տեսնելով, պաղատագին «մարդասէր» Եւրոպիոյ գիւրծած են յաճախ, սակայն նա հայկական կամ մակեդոնական ազգի մը վշտերը, ցաւերը ու շարժարանքը բնաւ իսկ չուզեր գիտնալ:

Շահը, ահա այն գիւրծական գաւազանը, որ Եւրոպիոյ գիւրծանագէտներուն ու թագապալներուն տեսողութիւնը կը շլացնէ ու իրեն կը քաշէ:

Ներկայիս, Թուրքիոյ մէջ գտնուած քրիստոնեայ ազգերը, և ամենէն աւելի պուրկարներն

(\*) Պուրկարական կարեւոր օրաթերթի մը մէջ մեր յեղափոխական դործունէութեան մասին գրուած այս շատ ճշգրիտ տեսութիւնը չենք կըրնար աննկատ թողուլ: Ինչպէս կերեւայ, յօդուածագիրը քաղաքակրթ ազգին մէկ զաւակն է. եթէ ոչ բուն հայ մը, որ կրցած է այնքան մտէն ու յստակօրէն տեսնել հայ իրականութիւնը, եթէ մեր անկեղծ նկատողութիւնները չիւ անձերու կողմէ կը խճրուին, հեռուանց եկող այս անշահախնդիր խօսքերը ոչ մէկ կասկած կը թողուն այլեւս մեր աչք ծակող իրականութեան վրայ:

ու Հայերը. ոչխորներ են, պատրաստ ժամանակակից նէրոնի— Պոլսոյ բռնակալին, տապալէն անցնելու:

Թուրքիան շահագործումի ընդարձակ դաշտ մըն է դարձած, ուր այլ եւ այլ պետութիւններ կուզեն իրենց ճղճիմ ելիւժտական ու տնտեսական ազահութիւնը գոհացնել:

Արեւմտեան պետութիւնները իրենց գիւրծագիտական կարմրագիր խօսքերու մէջ միշտ կը յեղիչեն — լաւ յարաբերութիւններ, սրտակից համաձայնութիւն ու դաշնակցութիւններ. իսկ անգին մի և նոյն ժամանակ այլ և այլ խորամանկութիւններ կը բանեցնեն, աչկապուկ կը խաղան, իրենց կռնակը կը դարձնեն, երբ եղբայրակցութիւնը անպտուղ կը մնայ, և կամ տունավաճառի մէջ եղած գողօրունման, իրարու հետ կը համաձայնին, երբ բայ բաժին ընելու երկիր մը կամ Թուրքիոյ դէմ նաւային ցոյց մը սարքելու հարկ կրլլայ, սակայն այն մեծ պետութիւնները ատով միշտ ծիծաղելի կը գտնան և կամ դժբաժանական գոհացում մը միայն կը ստանան:

Տիրապետող զէնք շահասիրութեան, սամոյութեան, գարշելի անիրաւութեան ու ժլատութեան, քաղաքական և աշխարհային յեղձուցիչ մթնոլորտէն, հայ յեղափոխական կազմակերպութիւնները ի՞նչ կրնան սպասել: Մարդասիրութիւն!! Մարդասիրութիւն և քաղաքականութիւն!.. Ներկայ դարուս մէջ ատի միմիայն գծրախտ բաղձացողի մը ուղեղին արտացոլացմունքն է: Ով որ այս բառերը արտասանէ, բոլոր գիտակից մարդիկներուն արգահատանքի ժպտը միայն իր վրայ կրնայ հրաւիրել:

«Տնէվնիկ»


## ԹԱԼԱՍԻ ՎԵՐՅԻՆ, ԴԵՊՔԵՐԸ

(Ճամբորդի մը պատմութեան)

Տարուս Մեծ Պահոց առաջին ուրբաթ անուր, կեսարիոյ եւ Թալասի մէջ տեղ կը ճամբորդին երկու ձիաւորներ, երեսներն ծածկուած, Միւսնոյն ճամբուն վրայ կը գտնուին վեց թիւրք սօֆթաներ: Չիաւորներուն մէկը յառաջանալով անոնց կը մօտենայ եւ քառակուսի տուփ մը կը յանձնէ լսելով. — «Այս տուփը տարէք, ծխախոտի Բէժի Ծնօրէնին, կամ աւոր օգնական Մազար պէյին: Անոնցմէ քառորդ ոսկի ընծայ պիտի ստանաք: Բայց չըլլայ որ տուփը բանաք մէջը Գուրանը չէրիֆ կայ:

Սօֆթաները երբ քիչ մը ճամբորդելէ վերջ հանգչելու կը նստին, այս տուփի մասին հետաքրքիր կըլլան, և անոր ծանրութեանն ալ կը կասկածին: Վերջապէս կորոշեն բանալ եւ երբ իրենց ջանքերը ապարդիւն կը մնան իրենցմէ մէկը գետին կը ձգէ զայն ու կը փորձէ ոտքի հարուածներով բանալ: Յանկարծ կը պայթի տուփը մարդուն աղիքները դուրս կը թափին ու կը մեռնի, ուրիշ մը կոկորդէն մտած երկաթի կտորէն կիսամեռ կրնայ երբորդին աչքերը կը կուրծան, չորբորդն ու հինգերորդը կը վիրաւորուին: Ասոնցմէ վեցերորդը, որ գործի մը համար իրենցմէ հեռացած էր պայթիւնին ձայնէն ետ կը դառնայ, և եղբայրութիւնը տեսնելով կը վազէ կեսարիոյ կառավարութեան լուր կուտայ:

Ոստիկանները կը հասնին, մեռեալն ու վիրաւորները կը փոխադրեն զօրանոց, ու վիրաւորներէն երկուքն ալ կը մեռնին, ու ողջ մնացողներուն հարցաքննութեանն յետոյ կը սկսին խուզարկութիւնները: Ամեն կողմ մինչեւ չորս ժամու տեղ ոստիկաններ զրկուելով բոլոր ձիաւոր ճամբորդները կը բերուին այնպէս որ երկու օր վերջ բանտին մէջ 200 հոգի կը լիցուի: Ասոնց հետ կը գտնուի զէպի կրիին ճամբորդող հայ երիտասարդ մը, որ շարաշար ձեծի ազգեցութեան հինգ օր վերջ կը մեռնի: Նոյնպէս կը բանտարկուին ժամանակաւ կեսարիոյ եւ Թալասի մէջ յեղափոխական ճանչցուած շատ մը հայեր: Ամենէն աւելի կասկածելի կը նկատուի Թալասի երիտասարդ մը, որուն տուր խուզարկուելով կեղծ դրամ կը գտնուի, և իրեն իբր մեղաւոր կը բռնուի Թալասի վարի գիւղէն Տէր Յակոբ քահանան:



Յետոյ կը բերուի այս քահանային հետ երբեմն խնդիր ունեցող հարուստ հայ մը, ճիւղային էֆէնտի անունը...

Աստուծոյ հոգիով վերոյիշեալ երիտասարդը տանջանքներով կ'ըստիպեն որ իրբեւ պայթուցիկներուն տէր...

Թուրք բանտարկեալներուն օտիպման վրայ հայ երիտասարդը իր խոստման համեմատ փաշային մատնութիւն կընէ փաստարան Արսէն էֆէնտի նկատմամբ...

Մինչեւ հիմայ երեւան չէ ելած պայթուցիկ տուփին տէրը. խստութիւնները օրէ օր կը սաստկանան...

սիններուն բանտարկութեան պատճառով վախցած ու մեռած են. առեւտուրը դադարած է. գպրոցները փակ են:

Ա. Ս.

«Լուսարբեր»

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՒԹԷՒ

Թերջան, Վ... գիւղ 2 ապրիլ 1906

Սիրելի եղբայր իմ Մ...

Նախ և առաջ ձեր պատուազան ու պիտութիւնը հարցնելով կը յօսամ թէ ողջ և առողջ վիճակի մէջ էք. եթէ մեր կողմը կը հարցնէք, փառք բարեբարին, մինչեւ երկտղիս գրուած թիւերը ողջ և առողջ ենք...

բենութիւններով ու անխղճութիւնով: Կոտորածներու ժամանակէն մինչեւ այսօր, իր բանը գործը հայոց օճախը քանգել եղած է: Ժամանակ մը Տուղակցի Հասան աղային գործակատարն էր և մէկին տեղ հարբւր կուներ բռնի: Հիմա ալ թուրք կուտարութեան մէջ տեղ բռնած է: Եթէ մի հայ հայրենիք վերադառնայ անմիջապէս կառավարութեան լուր կուտայ և ծեծելով բանտ զնել կուտայ, մինչեւ որ ունեցած չունեցածը յափշտակեն ու մարդը փճացնեն: Բանտէն ազատելէն ետքը, մարդը հազիւ 2-3 ամիս միայն կեանք կուեննայու կը մեռնի: Իայց ի սէր Աստուծոյ, կը խնդրեմ եղբայր, մտածեցէք մեզի և ելքի մի ճանապարհ ցուցնելով մեզի խալտեցէք աս տեղէն: Կարծեմ այս չափը գրելով զուն կը հասկնաս մնացածը:

Յատկապէս կը բարեւեմք քեւ և քոյրս քեզի:

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՈՂԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(a)

Քաղաքաբար կը հրատարակենք 19 մայիսի, Տուժար 12րդ նիստին մէջ, երկրագործական հարցի մասին տեղի ունեցած ընդդիմաբանական վիճաբանութիւնը: Նիստին կը նախագահէ փոխ նախագահ Տուղուրը: Եղած երեսփոխանական ընտրութիւնները կը ըննուին ու կը հաստատուին: Աստուծով, Ալատին եւ Լուսի վերեսփոխաններուն գիւղաքաղաքական խորհուրդներու կողմէն ուղղուած հետազոտութիւնը կը կարգադրուի, որով կը գանգատին վարչական իշխանութիւններէ: Ասկէ ետքը կըսկսի ընդդիմաբանական պայքարը երկրագործական հարցի մասին: Նախ եւ առաջ կը խօսի Լոգոտ:

«Հողական հարցը կարելի է յայտարարել հետեւեալ երեք սկզբունքներու վրայ հիմնուելով:

1. Բովանդակ հերկելի երկիրը պէտք է պատկանի երկրագործ բնակչութեան, որ ուզածին պէս անկէ օգտուի եւ կամ անոր տէրը ըլլայ:

2. Երկիրը պէտք է բնակչութեան ձեռք անցնի անտեսական տեսակետով իսկուպէս արգարտի պայմաններու տակ:

3. Հողէ օգտուիլը չպէտք է որ գիւղացին ստորագասութիւնով մը կապուի:

Ժողովուրդը սոսկալի ու արգարտացի անշահարեութեամբ մը կըստատէ որ Տուժար ամէն ինչ ընէ եւ զինքը ազատէ անօթութեան մահացու ճիւղէն:

Փոխ նախագահը կիմացնէ թէ ներկայ հարցի մասին իօսելու համար 100 եւսփոխաններ արձանագրել տուած են իրենց անունը: Տուժար կորչէ որ այս կենսական հարցի մասին եղած ընդդիմաբանութիւնները չընդմիջեն:

Նախաբանող, Հոս շատ մը գիւղահիւս ճառեր կը լսենք սակայն գիւղացիները մեզի հոս խրկեցին, գործելու եւ ոչ թէ հոս ասանու: Եթէ մենք այսպէս շարունակենք ու շարաթններով երկրագործական հարցը լուծել ճգնինք, ժողովուրդը այդ հայրը առանց մեզի ալ պիտի որոջէ: Գիւղացիները շատ պարզունակ կերպով կը դատեն. մենք, գիւղացիներս, նորին կը նայինք այնպէս՝ ինչպէս երկխաները կը նային իրենց մօր կուրծքը: Կար ժամանակ, երբ շորպարները կըստիպէին մեր մայրերը իրենց չունեմուն կախ տալ... Գիւղացիները կըսեն թէ ասի այսօր ալ տեղի կուեննայ, տարբերութիւնը սա է միայն թէ, մեր մայրերը որ մեզի ծնած ու սնուցած են հիմայ կախ չեն տար չորպարներ չունեմուն, այլ կուտայ նա որ մեզ կը սնուցանէ՝ հողը:

Մենք չենք մտածեր որ մասնաւորներու հողատիրութիւնը պէտք է ոչնչանայ, այլ կը պահանջենք որ օրէնքը անհատուժ երկիրներու տիրապետուը արգիլէ:

Ասկէ ետքը կը խօսի Բիւզըի եւ ուրիշներ, եւ երկրագործութեան

ՀԵՆՐԻ ՏԸ ՔԼԱՅՍ

Ը Ն Կ Ե Ց Ի Կ Ը

(Շար. Ասի. քիւիկ)

Պատահեցաւ որ ճիշտ նոյն միջոցներուն, Փիաշի ամուսինները, իրենց ազգականներուն այցելութեան համար կիրակի մը դիւղ գացին: Երբ նիքօր ինքզինքը առանձին գտաւ, անմիջապէս Քաղվիտաի գնաց և զայն իր փոքրիկ աղջկանը հետ զոր ունեցած էր կարտիսնայէ մը, էլ վրիտ սեռականը առաջնորդեց: Տան սպասարներուն զայն ներկայացուց իր օտարականութիւնը որ կը փափաքէր Փիաշիներու նկարները և գորգեղէնները տեսնել: Բայց որքան մեծ եղաւ զարմանքը, երբ Քլայս, փոքրիկազրիկը, սկսաւ աղաղակել վարագործը վերցուածին պէս: ՂՃէր Աստուած, հայրենիս, սինեօր նիքօրն է. դուք չէք միթէն: Քաղվիտա լուր կը

մնար Արգարեւ. կենդանագիրը կատարեալ նմանութիւն մը ունէր իր սիրականին հետ, մանաւանդ երբ միտքը կը բերէր զայն ձենովացի սպասի հագուստին մէջ զոր քանի մը ամիս առաջ հագած էր իրեն հետ Բարեկենդանի հանդէսին գացած ատեն: Նիքօր, կենդանութիւնը զանազան վտարել յանկարծական շիկնութիւնը որ այտերուն վրայ տարածուած էր, գրկեց փոքրիկ աղջիկն ու ըսաւ. «Այո, ճիշտ է, սիրելի Քլայս, այս կենդանագիրը այնքան ինձի կը նմանի որքան դուն անոր» որ ինքզինքը չու հայրը կը կարծես, Բայց, Քաղվիտա, որուն մէջ նախանձի գոռն զգացումը արթնցած էր, անոր իրատակարար մը նետեց. «Վերջուպէս, ըսաւ հայրենիս առջեւ անպիտակ, ով կուզէ թող ըլլայ. ինձի համար մի եւնոյնն էն: Յետոյ, ցրտօրէն հրածեղ տուաւ եւ սենեակէն դուրս ելաւ: Քաղվիտաի մեկնելէն ետքը, Նիքօր քուռն յուզման մը ենթարկուեցաւ. վայրագ ուրախութեամբ մը

կը միջեր այն բոռն ցնցումը զոր զգացած էր էլ վրիտ գիւղացիին զարմանահարչ ելեւան ժամուն: Այս կենց մէջ, որ աշխարհի մէջ առաջինութեան տիպարի մը տեղ ընդունուած էր ու է կիրք մը յուզելու մտածումը, միացած անկէ վրէժ լուծելու գաղափարին հետ, իր ինքնասիրութիւնը կը շոյէր. ու տեսնելով որ բազմը իրեն կընծայէր այդ երկու փոփոքները միանգամայն գոհացնելու սուրբը, այլ եւս անձկանք կը սպասէր էլ վրիտ վերագործին և այն ժամուն: Երբ ակնարկ մը պիտի ապացուցանէր վերջնականապէս իր զեռ անկախուն համոզումը, իր յափշտակութիւնը անպարզորելի էր, ու եթէ չըլլար իր հաստատ յիշողութիւնը թէ՛ էլ վրիտ, պատկերին առջեւ ծնրադրած պահուն, երբ ինք զայն զրան փականքի ծակէն կը գիտէր, Քլայս անուանած էր կենդանագիրը, ոչ մէկ բան պիտի կարողանար իր յափշտակեալ խանգաղումով թիւնը սահմանափակել եւ սակայն, նոյն իսկ այս անուան հնչումներուն

մէջ կար բան մը որ պինքը յոյսերով կօրօրէր, ինքն ալ չէր գիտեր թէ ինչու: Վերջուպէս տեսողութեան կամ լսողութեան որի՞ս կաակածելու իր փոխնիփոխ վարանումներուն մէջ, բնականաբար հակեցաւ այն համոզման որ աւելի սաստկօրէն իր ըլլածանքը կը շոյէր: Եւ սակայն, էլ վրիտ շատ ուշ վերագործու: գիւղին, իր հօրեղբոր ուղեւոյն տունէն բերած էր դեռատի ազգականութիւնը, որ Հոռոմ տեսնելու հետաքրքիր էր: Անոր հաճոյակատար ըլլալու գրադած, էլ վրիտ նիքօրի վրայ հազիւ թէ աննշան եւ խոստովակականակ մը միայն նետեց, երբ այս վերջինը ամենակատարեալ հոգածութեամբ մը անոր կօքնէր կառքէն իջնելու տեսնել: Բազմաթիւ շարաթններ անցան այս տան սովորական շեղող շարժումներուն մը մէջ, ի պատիւ հիւրին: Քաղվիտա ներսն ու դուրսը այցելեցին այն բոլոր բաները ոյոնք կրնային հետաքրքրական ըլլալ երիտասարդ ու ապրելէն երջանիկ օրիորդի մը համար նիքօր, իր առեւարաւ



տէգիս մէջ հաստատած ենք նաեւ ճշարտան մը, ուր կատարեալ խնամքով ու մաքրութեամբ կը պատրաստուին ամէն կարգի կերակուրներ մասնաւորապէս վարձուած վարպետ արհեստաւորներու ձեռքով, Ծովային լողանքի կամ պոյսի համար քաղաքս այցելող պատ. հասարակութիւնը ամէն դիւրութիւն պիտի գտնէ մեր ճաշարանին մէջ, որ կրնայ ամենէն փափկաճաշակներն իսկ գոհացնել: Յարգոյ յաճախողներուն զուարճութեան համար այնպէս կարգադրած ենք որ, զարեջրատանս նուազախումբը, որուն ղեկավարն է հանրաձայնօր Սաէսթօր Հալմի, պիտի նուազէ բացի երեկոյններէն, նաեւ կէսօրուան ճաշի ատեն:

Միշտ՝ Ան Սեփրակեան եւ Ընկ.

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սասունի անդրանիկ ապստամբութեան հերոսներէն քաջ Մուրատի քարտէ փախուստը արդար հլճուանքի մը մէջ ձգած է տմբողջ Հին Հնչակեան կուսակցութիւնը, ոյուն օսկանները ուրախութեան խելքերնին թուցնելու վրայ են: Այս առթիւ իրենց թերթերուն մէջ գրուած ու է քլա մ ն եր կը յիշեցնեն մեր յեղափոխութեան առաջին օրերուն հնչակի ուսուցիչ ու աղայական խմբագրականներուն ոճը: Ահա նմոյշ մը ատենցմէ. «Թո՛ղ այսօր ծածկուի հայի արեամբ արեցած այդ ստոր ոճը: րագործի (Համիտի) բորբոսած սիրտը, լսելով քաջ Մուրատի ազատութիւնը, թո՛ղ Մեծ Մարգասպանը միանգամ ընդ միշտ համոզուի որ, երբ շուրջ Հնչակեանութեան սուրը, բռնակալութեան բոլոր պատէշները կը փլչին որպէս թղթաշէն զգեակներ, և հայկենանուէր յեղափոխականի անյողգողը կամքին և վճռականութեամբ առած բոլոր գիտակից քայլերու գարշապարին տակ կը փշրուին բանտերու երկաթեայ զաններու կը խորտակուին ծանր շղթաները»:

Պէտք կա՞յ մեկնութեան: Ի՞նչ մը համեստութիւն սակայն, անցած են երբեմնի միամիտ օրերը, ինքզինքնին չի խաբենք:

- Տու՛մայ: Թիֆլիսի պատգամաւորի ընտրութեան ատեն, նոյն քաղաքին սասնը մէկ ընտրելիներու վրայ տասը շահած են ընկերավարական ռամկավարականները:

- Եգիպտոսի մէջ հիմնուած հայ բարեգ. ընկերութիւնը որոշել է կովկասի արկածեալներուն հասցնել 100 եգիպտական ոսկի գումար մը:

- Ուստրի հայ աւետարականներուն մէջ ապուշ պատուելի մը Սանդիկեան քարոզի ատեն ի միջի այլոց հետեւեալ յորդորը կուղղէ հայերուն.

«Ինձի համար հայութիւնը չի-

կայ, այլ կայ Սմերիկա: Հայութիւնը հոն Տաճկաստանի մէջ մնաց, իսկ մենք հոս Ամերիկացի ըլլալու ենք: Ես արդէն Ամերիկացի եմ ու իմ զուակներուս հայերէն չեմ սովորեցնէր: Այս քան լիրբ հայ պատուելի չէինք երեւակայեր որ գոյութիւն ունենար:

- Փարիզի մէջ երկու ֆրանսացիներ ֆրանքօ հայկական ընկերութիւն մը ուղեր են հիմնել, հայրենասիրութիւնը փրոնսայի մէջ տարածելու նպատակով, և երբէք հայերու նիւթական օգնութեան չի դիմելու միտումով: Բայց, քոնի մը օր եաքը, բոլոր Փարիզի հայերուն ընկալագրերը զրկեր են նամ. կով միասին, ուր կը յուսան թէ ազնիւ պարոնը պիտի կարենայ ոչոս գրամբերել ընկերութեան գանձուն: Հայասիրութիւն է այս թէ առաւ փախուցութիւն:

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոս 15 ին Սօֆիայի մէջ պիտի բացուի հարու-Սլավոնական գեղարուեստից ցուցահան. գէսը շքեղօրէն: Այդ առթիւ Սօֆիա պիտի հաւաքուին հարուի սլավական ցեղերու գեղարուեստի բոլոր ներկայացուցիչները, Վիեննայի և Փրակայի գեղարուեստական կաճառներու երեւելի դէմքերը: Փարիզի արդիւց Միւ շա սլավ գեղարուեստի վրայ դասախօսութիւններ պիտի ընէ:

- Ելեմտից նախարարութեան որոշումով, առկէ ետքը բլիճի արտաձուլութեան համար հարիւրին մէկ մաքս և պարկին 10 սանդղմ սթաթիսթիք պիտի առնուի:

- Քաղաքի լըբի և Քաւոլօփի վարդի իւլերու այս տարուան արտադրութիւնը ամենաընտիր յատկութեամբ օժտուած է. նաև արտադրութեան քանակութիւնը նախորդ տարուանէն աւելի եղած է:

- Պուլկար երկաթուղիներու սշխատանքներուն գործաւորները, առկէ վերջը, ըստ կառավարական կարգադրութեան, օրական 8 ժամ միայն աշխատութիւն պիտի ունենան:

- Երկրորդական վարժարաններու գրաւոր ամսվերջի հարցաքննութիւնները բոլոր Պուլկարի մէջ, պիտի սկսին յառաջիկայ յունիս 1 էն և պիտի վերջանան 5 ին, իսկ բերանացիները պիտի տեսնեն յունիս 8 էն 25:

- Պուլկար կառավարութեան և ուսուցչական ընկերութեան միջեւ բանակցութիւններ տեղի կունենան ապրանք երկու երկիրներու միջև ուղղակի փոխադրութեան համաձայնութիւն մը կայացնելու համար, նման

այդ նպատակով աւստրիական, հունգարական, ռուսական և ուրիշ շոգենաւային ընկերութեանց հետ եղածներուն:

- Սօֆիայի մէջ անձնասպան եղած է այն քաղաքին կիմնազիտ նիւսուցչապետներէն դպրութեանց աօքիէօր Էմմանուէլ Իվանօֆ, քարա Պաղլարի մէջ ծառէ մը ինքզինքը կախելով և ատրճանակի հարուած մը տալով գանկին: Անձնասպանութեան պատճառը, իր վիայէն գտնուած կիսաւարտ թուղթի մը համաձայն, յուսահատութիւնն է եղած իր առողջական վիճակէն: Պիչիչ կը կատարուի, գրած է անձնասպանը, առանց Խաւուճոյ կամքին. անբուժելի և տաժանելի հիւանդութիւն մը ու անքունութիւնը...: Հանգուցեալը թոքախտաւոր է եղեր:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Եւ որովհետեւ պաշտօնեանէրու ամականները ժամանակին չեն վճարուիր, այս իսկ պատճառով ծովակալութիւնը ու ծովային նախարարութիւնը, ելեմտից նախարարին մերժումի վրայ, որոշեր է «Մասխուսիէ» ընկերութեան 17 հին շոգենաւերը ծախել, որպէսզի կարենան դրամ ձեռք ձգել: Այս շոգենաւերը պահեստի էին:

- Փոխառութեան կնքումը արտոնող իրատէն ելած է, այսու եպարքոսը և արգարդատութեան նախարարը այս մասին տակաւին կը հակառակին:

- Մաքսային տարբի յաւելումը կենթագրուի թէ քիչ օրէն իր լուծումը կը ստանայ վերջնականապէս, Միացեալ Նահանգներու գործակատարութիւնը այս յաւելումի մասին կընդդիմագրէ: Գործակատարութիւնը պատրաստ է տալ իր համաձայնութիւնը եթէ առկա թնացած 14 հարցերը կարգապարտելու ըլլան, որոնցմէ մին Պոլսոյ գործակատարութիւնը գեսպանութեան վերածելու հարցն է: Վեց մեծ պետութեանց դեսպանութիւնները տրամադիր չեն բնաւ ոյժ տալ ու է գործակատարութեան մը ընդդիմագրումին մաքսային տուրքի յաւելման մասին, որովհետեւ այս խնդիրը քաղաքական է, որուն վեց մեծ պետութիւնները կը հետեւին Մակեդոնիան բարելաւելու ու խաղաղացնելու նպատակով:

- Թրքական կառավարութիւնը Ռուսաստանէն 1000 հատ ձի գնած է իր բանակին համար:

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ինթերսպուրկէն կիմացնեն թէ յառաջիկայ 28 յունիսին կո

սուտարդ վէննա Տու.Ֆան անպատճառ փախուցու է:

Կառավարական սղոթակները գիւղացիներու բաժնուելու համար, կառավարութիւնը նախագիծ մը կը պատրաստէ:

- Կուպանգա նահանգի Որմավորա գիւղին բնակիչները հետեւեալ հեռագիրը քաշեր են Միխայիլ չէնգո երեսփոխանին: «Գիւղացիներու ու գործաւորներու Մայիս 21 ին տեղի ունեցած ժողովը որոշեց ծանուցանել աշխատանքի կուսակցութեան պատկանող երեսփոխաններուն պնդել հետեւեալ պահանջներու վրայ:

- Ինքնիշխան երեսփոխանութիւն, բոլոր հողերու տիրապետչութիւն, ընդհանուր ներում, վերցնել պատերազմական դրութիւնը: Ու է յարուցուած խոչնդոտի առջեւ մի երկմտք ու խրաշիք. պատրաստ ենք ամէն գնով Ձեզի պաշտպանել:

- «Ինտիլիգենցի Գորէսբունտէնց» լրագրին Ինթերսպուրկէն կը հաղորդեն: Հաւաստի աղբիւրէ կիմանամ թէ կորէմիդին նախարարութեան հրաժարելը որոշուած է: Կառավարական շրջանակներու մէջ այս լուրը չեն հերքեր:

- Ինթերսպուրկի կարևորագոյն լրագրիները կը յայտարարեն թէ՛ քիչ ժամանակէն արդի ելեմտից նախարար Գոգովցէվի պիտի յանձնուի կազմակերպել նախարարական նոր գահիճք Տու՛մաի անդամներու մասնակցութեամբ:

Լուր մ'ալ կը շրջի, որուն համաձայն Սվեադոբոլգ Միլոսքի գարձեալ կառավարութեան գրուելու անցնելու է:

- Քիչ ժամանակէն Յարը և Յարիցան Խրիմ պիտի ել թան, ամառը հոն անցնելու:

- «Պէրլինէր Յայթուկ» լրագրից կը հաւաստէ թէ՛ Օտէսայի մէջ զինուորական ապստամբութիւն մը ծագած է, հետեւակազօրաց գուեղ մը և 12 սպայ ապստամբեր են:

Ձինուորները կարգը վերահաստատեր են: Ապստամբներէն 23 հոգի սպաննուած է իսկ 67 հոգի ձերբակալուած:

- Թոմսքէն կիմացնեն, քաղաքական կարեւորագոյն մանտարկեալներէ 7 հոգի, բանտի պատուհանին վանդակապատը փշրելով, յաջողած են բանտէն փախչիլ:

- Հասկցուած է թէ՛ Կարոնի սպանողները ոստիկանութեան կողմանէ վարձուած մարդիկ են եղեր, կը կարծուի թէ այս խնդրին մէջ քանի մը երեւելի ոստիկանական պաշտօնեաններու մատը կայ: